



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 01
«-----» ----- 2013թ.

3-Ն
Թիվ -----

**ԱՐՏԱՇԱՏԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2013Թ. ՏԵՂԱԿԱՆ
ՀԱՐԿԵՐԻ, ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ
ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՄԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Հարկերի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, հիմք ընդունելով 06.12.2012թ. „Տեղական տուրքերի և վճարների մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքը.

Քաղաքային համայնքի ավագանին **Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝**

1. ՏԵՂԱԿԱՆ ՀԱՐԿԵՐԻ ԵՎ ՏՈՒՐՔԵՐԻ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐ

1/ Տրանսպորտային միջոցների կայանատեղի համար տեղական հարկ սահմանել ամսական տվյալ գոտու հողատարածքի կադաստրային արժեքի 10 %-ի չափով:

2/ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների /ներառյալ՝ ոչ հիմնական/ շինարարության /տեղադրման/ թույլտվության համար տեղական տուրքը սահմանել.

հիմնական օբյեկտների համար՝

ա/ մինչև 300 քմ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական /ամառանոցային/ տների, ինչպես նաև մինչև 200 քմ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար՝ 15000 դրամ,

բ/ սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝

բա/ 201-ից մինչև 500 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 30000 դրամ,


բբ/ 501-ից մինչև 1000 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 50000 դրամ,

բգ/ 1001 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 100000 դրամ.

ոչ հիմնական շինությունների տեղադրման համար՝

գ/ մինչև 20 քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 3000 դրամ

դ/ 20 և ավելի քմ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար՝ 5000 դրամ.



3/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների /բացառության Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի/ համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա/ չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, տեղական տուրքը սահմանել՝ 3000 դրամ.

բ/ բացի օբյեկտի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափի, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը՝ օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացման կամ սենքերի գործառական նշանակության փոփոխության մասով.

գ/ նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների /այդ թվում՝ ստորգետնյա/ շինարարություն կամ սենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին կետով սահմանված նորմերը:

4/ Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 5000 դրամ:

5/ Համայնքի տարածքում՝

ա/ ոգելից և ակոհոլային խմիչքների և /կամ/ ծխախոտի արտադրանքի, իսկ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտներում՝ ոգելից և ակոհոլային խմիչքների և /կամ/

ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար.

- յուրաքանչյուր եռամսյակի համար տեղական տուրք սահմանել 7000 դրամ


6/ Համայնքի տարածքում՝ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրք սահմանել յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ .

7/ Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և /կամ/ սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար տեղական տուրք, ընթացիկ տարվա համար սահմանել 150000 դրամ

8/ Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվություն տալու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ:

9/ Համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար յուրաքանչյուր տարվա համար սահմանել 50000 դրամ տեղական տուրք:

10/ Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին /սաունաներին/ խաղատներին ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել.



- ա/ առևտրի օբյեկտների համար՝ 25000 դրամ
- բ/ հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ 75000 դրամ
- գ/ բաղնիքների /սաունաների/ համար՝ 200000 դրամ
- դ/խաղատների կազմակերպման համար՝ 500000 դրամ
- ե/ շահումով խաղերի կազմակերպման համար՝ 250000 դրամ
- զ/վիճակախաղերի կազմակերպման համար՝ 100000 դրամ

11/ Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրք յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանել
 ա/ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 6000 դրամ.

բ/ ոչ հիմնական շինությունների ներսում հանրային սննդի կազմակերպման և իրացման դեպքում 1000 դրամ:

12/ Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանել՝

ա/ ալկոհոլային սպիրտի պարունակությամբ մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ

բ/ թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը քսան և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3000 դրամ

գ/ այլ արտաքին գովազդի համար՝ 1000 դրամ

դ/ դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ

13/ Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 2000 դրամ:

14/ Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 5000 դրամ:


15/ Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները օգտագործելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել 50000 դրամ:

16/ Համայնքային կանոններին համապատասխան քաղաքային համայնքի տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար տեղական տուրք, ընթացիկ տարվա համար չսահմանել:

2. ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1/ Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկա-տնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 10000 դրամ:

2/ Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության ներդրում հոդերը անհրաժեշտ չափազրական և այլ նման աշխատանքների համար տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել 2000 դրամ:



3/ Տեղական ինքնակառավարման մարմնի կողմից աճուրդներ և մրցույթներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար մասնակիցներից վճար սահմանել 15000 դրամ:

4/ Քաղաքային համայնքի տարածքում աղբահանության վճարը սահմանել.

ա/ կենցաղային աղբի համար՝

ըստ հաշվառված անձանց քանակի՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և /կամ/ բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 100 դրամ:

բ/ ոչ կենցաղային և խոշոր եզրաչափ աղբի համար՝

ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար 1500 դրամ, կամ ըստ զանգվածի մեկ տոննա աղբի համար՝ 5000 դրամ:

5/Աղբահանության վճարի հաշվարկման հաշվետու ժամանակահատվածը համարել

օրացուցային ամիսը:

3. Ուժը կորցրած ճանաչել քաղաքային համայնքի ավագանու 23.11.2012թ. թիվ 54 որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից:

Բենիամինյան Կարեն
Դերմոյան Արման
Կիրակոսյան Գրիգոր
Մնացականյան Հարություն
Նազարյան Գոռ
Վարդանյան Ռազմիկ

Գալստյան Արթուր
Թադևոսյան Արման
Հայրապետյան Ռուզան
Հովհաննիսյան Վազգեն
Վարդազարյան Վաչագան

ՔԱՂԱՔԱՊԵՏԻ Ժ/Պ՝

Ա.Շ.ԻՆՅԱՆ

